ԳՐԱԽՍՈՒԹՅՈՒՆ

Р Е Ц Е Н З И И

Վ. Հ. ՌՇՏՈՒՆԻ, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, II մաս, «Միտք» հրատարակչություն, Երևան, 1968, 276 էջ, գին 1 ռուբ. 10 կոպ.

Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց պրոֆ. Վ. Հ. Ռշտունու «Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության» աշխատության երկրորդ մասը, որը նվիրված է կալվածատիրական գյուղացիության XIX դարի վերջին երեք տասնամյակի պատմությանը։ Բազմավաստակ գիտնականը, օգտագործելով առաջներում հրատարակած իր աշխատությունները և ի հայտ բերված նոր նյութերը, այս գրքում տալիս է Հայաստանում գյուղացիական ռեֆորմի նախապատրաստման, անցկացման և հետևանքների քննական տեսությունը, ապա անդրադառնում է կապիտալիզմի զարգացման պայմաններին և վերլուծում հասարակական հոսանքների դիրքորոշումը գյուղացիության հարցի նկատմամբ։

Հեղինակը նախապես շարադրում է 1861 թ. ռեֆորմի համառոտ պատմությունը, ապա նշում է, որ երկրի տնտեսական զարգացումն ու գյուղացիության դասակարգային պայքարի ակտիվացումը ստիպեցին ցարիզմին անցկացնել այդ ռեֆորմը նաև Անդրկովկասում։ Ռեֆորմի նախագծի մշակման համար կազմվեցին զանազան հանձնաժողովներ, որոնց մեջ մտան տեղական ազնվականները կամ աղաները։ Այդ հանձնաժողովների մշակած նախագիծը նախ հավանության է արժանանում Կովկասի փոխարքայությունում, ապա խմբագրվում է կայսրության գլխավոր կոմիտեում և վերջապես 1870 թ. մայիսի 14-ին հաստատվում ցարի կողմից ու ստանում օրենքի ուժ։

Վ. Ռշտունին հանգամանորեն վերլուծում է այդ օրենքը կամ, ինչպես ընդունված է ասել, 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը։ Կանոնադրությունը տարածվում էր Երևանի, Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգների (կամ Հայաստանի ու Ադրբեջանի), ինչպես նաև Թիֆլիսի նահանգի Թիֆլիս, Բորչալու, Ախալքալաք և Ախալցիխե գավառների վրա։ Բացառություն լինելով կազմում Երևանի նահանգում ապրող այն մուլքադարներն ու թիուլդարները, որոնք չէին պատկանում այսպես կոչված մահմեդական բարձր դասին և որոնց հողերի վրա շինականներն ապրում էին նրանց կամավոր համաձայնությամբ։ Այլ կերպ ասած՝ օրենքը չէր տարածվում Հայաստանի հողատերերի մոտ 20 տոկոսի վրա։ Ցարիզմը այդ կալվածատերերի ու նրանց հողերի վրա բնակվող շինականների հարաբերությունների մասին հատուկ կանոններ հաստատեց փոքր ինչ ուշ՝ 1875 և 1877 թթ.։

Վերլուծելով վերոհիշյալ կանոնադրության բովանդակությունը, պատմաբանը նշում է, որ այն ամենից առաջ որոշում էր հողի սեփականության հարցը, հողը սահմանում էր իբրև մուլքադարների ու թիուլդարների սեփականություն, իսկ գյուղացիները կարող են առայժմ օգտվել նրանից միայն բաժնեհողի սկզբունքով։ Կանոնադրությունը կալվածատերերին թույլ էր տալիս իրենց ձեռքում պահել հողերի 1/3-ը, իսկ մնացածը հանձնել շինականների օգտագործմանը։ Կանոնադրությամբ մուլքադարներին իրավունք էր վերապահվում անտառները ամբողջությամբ վերցնել իրենց տնօրինության տակ, իսկ արոտավայրերից օգտվել գյուղացիների հետ համատեղ։ Օրենքը սահմանում էր, որ շինականները իրենց յուրաքանչյուր տղամարդու համար (15 տարեկանից ոչ պակաս) պետք է ստանան 5 դեսյատին բաժնեհող, ապա նշում էր, որ նրանք կարող են այդ հողամասը նվիրել, ժառանգել կամ վաճառել իրենց համագյուղացիներին, իսկ այգիներն ու բանջարանոցները՝ նույնիսկ այլ գյուղերի կամ գավառների բնակիչներին։ Կանոնադրությունը հաստատում էր, որ կալվածատիրական գյուղացիները պետք է օգտվեն իրենց բաժնեհողերից ծխական եղանակով և արգելում էր դրանց պարբերաբար վերաբաժանումները։

Հեղինակը մերկացնում է ցարական օրենքի դասակարգային էությունը, նշելով, որ կանոնադրությունը հողատերերին իրավունք տվեց թալանելու գյուղացիներին։ Հատկանշական է, որ կանոնադրությունը շինականներին հարկադրում էր ստացած բաժնեհողի դիմաց մուլքադարներին կամ աղաներին վճարել իրենց բերքի 1/10-ը կամ 4/30-ը, իսկ ունեցած այգիների ու բանջարանոցների համար դրամ։ Օրենքը շեշտում էր, որ գյուղացիները պարտավոր են նշված հարկերն ու տուրքերը վճարել այնպիսի

աշգրտությամբ, ինչպես վճարում են պետությանը։ Խուսափողների կամ հրաժարվողների համար նախատեսվում էին մեծ, բանտարկություն և պատժի այլ ձևեր, որոնք պետք է իրագործեին տեղական իշխանությունները՝ կալվածատիրոջ պահանջով։ Գիտնականը, ամփոփելով այդ ամենը, իրավացիորեն գրում է. «...կանոնադրությունը կալվածատիրոջ եկամուտները անխախտ պահելու համար նրա տրամադրության տակ էր դնում հաշտարար միջնորդին և գյուղական իշխանությանը, որոնք գյուղացու նկատմամբ կիսաձորտական մի շարք բռնություններ գործադրելուց հետո, իրավունք էին ստանում կալվածատիրոջ պահանջով նաև հողազրկել պարտքի տակ ընկած գյուղացուն, տանից վտարել, գյուղական պրոլետարիատի դրության մատնել նրան կամ գործարանի ճամփան բացել նրա առաջ» (78)։

Կանոնադրությունը գյուղացիներին թույլատրում էր փրկագնել իրենց բաժնեհողերը։ Բայց դրա հետ մեկտեղ սահման էր դնում՝ 7 դես. ոչ պակաս և 15 դես. ոչ ավելի։ Բացի այդ, պետությունը շինականներին որևէ գումար չէր տալիս, գյուղացին բաժնեհողը պետք է փրկագներ իր միջոցներով։ Եվ որովհետև ցարական իշխանությունները, ելնելով կալվածատերերի շահերից, բաժնեհողերը խիստ բարձր էին գնահատել, իսկ գյուղացիները այդչափ գումար չունեին, ուստի Հայաստանում ռեֆորմյան ամբողջ ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև 1912 թ. փրկագնում համարյա տեղի չունեցավ։

Վ. Ռշտունին այնուհետև անդրադառնում է 1875 և 1877 թթ. կանոններին և վերլուծում հողային այն հարաբերությունները, որոնք սահմանվում էին մի կողմից «բարձր դասին չպատկանող հողատերերի ու թիուլդարների, իսկ մյուս կողմից դրանց հողերի վրա ապրող գյուղացիների միջև։ Նա ցույց է տալիս, որ 1877 թ. կանոնները, 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրության համեմատությամբ, իրենց բովանդակությամբ ավելի բուրժուական էին, որովհետև ավելի էին սահմանափակում կալվածատերերի իշխանությունը շինականների նկատմամբ, թեև թնացնում վերջիններիս վիճակը և նպաստում սեփական տնտեսություն ստեղծելու գործում։ Բայց դա միայն համեմատաբար, քանի որ 1877 թ. կանոնները նույնպես գյուղում պահպանում էին միջնադարյան կարգերը։

Հեղինակը չի սահմանափակվում Հայաստանում անցկացրած գյուղացիական ռեֆորմի վերլուծումով։ Դրա հետ միասին նրան է հետաքրքրում նաև նրա առանձնահատկությունները։ Ի տարբերություն Եվրոպական Ռուսաստանի, որտեղ ռեֆորմի պատճառները ուժեղ էին արտահայտվում, Անդրկովկասում դրանք համամատարար թույլ էին դրսևորվում (իսկ Հայաստանում ավելի թույլ)։ Եվրոպական Ռուսաստանում և Վրաստանում ռեֆորմը վերացրեց ճորտատիրական իրավունքը, իսկ Հայաստանում չանդրադարձավ այդ հարցին, քանի որ այստեղ այն չկար։ Եվրոպական Ռուսաստանում և Վրաստանում ռեֆորմը կալվածատերերին թույլատրեց իրենց ձեռքում պահել հողատարածությունների 1/2-ը և նույնիսկ ավելին, իսկ Հայաստանում՝ դրանց սոսկ 1/3-ը։ Վրաստանում գյուղացին ստացավ փոքր, իսկ Հայաստանում՝ համեմատաբար մեծ բաժնեհող (Թիֆլիսի նահանգում յուրաքանչյուր ծուխ ստանալու էր 5—10 դես., բայց փաստորեն ստացավ 3.7 դես. Քութաիսի նահանգում՝ համապատասխանաբար 5 և 2,5 դես., իսկ Երևանի նահանգում՝ 15 և 5,7 դես.)։ Դրա հետ միասին պետք է նկատի ունենալ, որ Վրաստանում, եթե գյուղացին մեռնում էր անժառանգ, նրա բաժնեհողը անցնում էր կալվածատիրոջը, իսկ Հայաստանում՝ համայնքին։ Ռեֆորմը Եվրոպական Ռուսաստանում պահպանեց համայնական հողատիրությունը, իսկ Հայաստանում դրա փոխարեն սահմանեց ծխականը։ Առաջինում գյուղացիների վճարած հարկերն ու պարհակները ավելի շատ էին, իսկ երկրորդում՝ համեմատաբար քիչ։ Եվրոպական Ռուսաստանում ու Վրաստանում շինականները առանց կալվածատիրոջ համաձայնության չէին կարող փրկագնել իրենց բաժնեհողերը, բայց Հայաստանում կարող էին։ Եվրոպական Ռուսաստանում պահպանվեցին կալվածատիրոջ վոտչինային իրավունքները, իսկ Հայաստանում, որտեղ դրանք մտցվել էին ցարական կառավարության կողմից XIX դարի 40-ական թթ., վերացվեցին։ Եվրոպական Ռուսաստանում պետությունը օգնություն էր տալիս գյուղացիներին իրենց բաժնեհողերը փրկագնելու համար, մինչդեռ Հայաստանում ու Անդրկովկասում չէր տալիս։

Հիմք ընդունելով այս առանձնահատկությունները և ղեկավարվելով 1861 թ. ռեֆորմի մասին Վ. Ի. Լենինի դրույթներով, պրոֆ. Վ. Հ. Ռշտունին դեռ 1940-ական թթ. իր աշխատություններից մեկում եկել էր այն եզրակացության, որ Հայաստանում գյուղացիական ռեֆորմի բովանդակությունը եղել է ավելի բուրժուական, քան Ռուսաստանում և Վրաստանում։ Նրա կարծիքով նման եզրակացության հանգելուն չի խանգարում նույնիսկ այն հանգամանքը, որ Հայաստանի գյուղացիները, ցարիզմի մեղքով, չեն կարողացել իրականացնել իրենց բաժնեհողերի հատկումը, այսինքն՝ զրկված են եղել պետության օգնությունից։ Գիտնականի այս եզրակացությունը այն ժամանակ քննադատվեց ակադ. Դրուժինի, իսկ հետագայում նաև սովետահայ

մի շարք պատսարանների ու տնտեսագետների կողմից[1]։ Ներկա աշխատության մեջ Վ. Ռշտունին անդրադառնում է այդ հարցին և իրեն հատուկ բարեխղճությամբ ուղղում է սխալը։ Նա գրում է. «Թեև Լենինի նշած չորս կետում էլ Հայաստանի (նաև Ադրբեջանի) կալվածատիրական գյուղացիության բուրժուական տնտեսական ուղղությամբ զարգանալու գծերը, ըստ 1870 թ. կանոնադրության, ավելի շատ էին, քան ռուսական, մանավանդ վրացական գյուղացիության համար, բայց ամբողջ Անդրկովկասում (Վրաստանն էլ հետը) ցարիզմը պայմաններ չստեղծեց, որ ինչպես Լենինն է ասում, «ավելի ցած լինի Հորտատերերին տրվող տուրքը», այսինքն՝ իրագործվի հետգնումը և գյուղացին իր հողաբաժնի տերը դառնա։ Այդ ամենը նշելուց հետո, այնուամենայնիվ, ես այն սխալ միտքն եմ զարգացրել, որ իբր թե նույնիսկ հետգնման չիրագործումը չի խանգարում խոսել Հայաստանի գյուղացիական ռեֆորմի ավելի բուրժուական բնույթի մասին ոչ միայն Վրաստանի, այլև նույնիսկ Ռուսաստանի համեմատությամբ» (181)։ Հեղինակային այս ճշտումը կարևոր նշանակություն ունի տվյալ հարցի գիտական լուծման համար։

Գիտնականը այնուհետև անցնում է ռեֆորմի կիրառման հարցին և փորձում է որոշել ետռեֆորմյան շրջանում կալվածատերերի ու գյուղացիների ունեցած հողատարածությունների չափերը։ Փաստական հարուստ նյութերով նա ցույց է տալիս, որ Հայաստանի կալվածատերերը նշված ժամանակաշրջանում իրենց ձեռքում պահեցին հողատարածությունների $^1/_3$-ից ավելին, այսինքն՝ ավելի շատ, քան նախատեսում էր 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը։ Իսկ գյուղացիներին տրվեց շատ ավելի պակաս, քան ասվում էր այդ կանոնադրության մեջ (յուրաքանչյուր տնտեսությունն ուներ 5,7 դես., այն դեպքում, երբ ռեֆորմը սմեն մի 15 տարեկանից բարձր տղամարդուն նախատեսում էր տալ 5 դես.)։ Հեղինակը կոնկրետ փաստերով ցույց է տալիս նաև, որ կալվածատերերը, չբավարարվելով իրենց այդ հափշտակումներով, հետագայում շարունակեցին բռնագրավել իրենց շինականների, անգամ սեփական գյուղացիների բաժնեհողերը և ավելի սաստկացրին նրանց սակավահողությունը, դրա հետ միաժամանակ պահպանելով հողագործներից իրենց առնելիքների չափերը, նրանց նկատմամբ կիրառած արտատնտեսական հարկադրանքի զանազան ձևերը։ Իոերի դրությունը ետռեֆորմյան գյուղում մնաց համարյա այնպես, ինչպես առաջ էր։

Պատմարանը պարզում է Հայաստանի կալվածատիրական շրջանները և նշում, որ ինչպես ազգային հողատիրության ընդարձակությամբ, նույնպես և տերունական գյուղացիների բազմաքանակությամբ առաջին տեղը բռնում են Զանգեզուրի ու Երևանի, ապա Էջմիածնի և Լոռու և վերջապես, Նոր-Բայազետի ու Շարուր-Դարալագյազի գավառները։ Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլի գավառին, ապա այստեղ չկար կալվածատիրական հողատիրություն։ Նա ցույց է տալիս, որ թեև հիշատակված գավառներում գյուղացիներն ընկած էին ֆեոդալական լծի տակ, այնուամենայնիվ ունեին տարբեր չափերի բաժնեհող և ենթարկվում էին տարբեր աստիճանի հարստահարման ու կեղեքման։ Հեղինակի այս ընդհանրացումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն գյուղացիների սոցիալ-տնտեսական դրության լուսաբանման, այլև երկրի տարբեր շրջանների միջև եղած տնտեսական տարբերությունները հասկանալու համար։

Պրոֆ. Վ. Հ. Ռշտունին այնուհետև ցույց է տալիս, որ ֆեոդալական հարաբերությունները ետռեֆորմյան Հայաստանում տասնյակ տարիներ մնալով համարյա անխախտ, XX դարի սկզբին, հեղափոխական շարժումների ազդեցության տակ, կրկին ենթարկվեցին կովկասյան իշխանությունների ուշադրությանը։ 1904 թ. գրչխավոր կառավարչապետ Գոլիցինը ներկայացրեց մի նախագիծ, որով Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի այսպես կոչված ժամանակավոր պարտավորյալ շինականներին առաջարկում էր ետ գնել իրենց բաժնեհողերը, կալվածատերերին մեծ գումար վճարելով։ Մեկ տարի անց Գոլիցինին փոխարինած Կովկասի փոխարքան, ձգտելով թուլացնել ծայրամասում հեղափոխական ելույթները, առաջարկեց առանց փրկավճարի վերացնել գյուղացիների կախյալ հարաբերությունները և այդ օրենքը, բացի Անդրկովկասի հինգ նահանգներից, տարածել նաև Զաքաթալայի օկրուգի, Դաղստանի, Էջմիածնի վանքապատկան գյուղացիների ու Բորչալուի խիզանների վրա։ Բայց կառավարությունը 1906 թ. քննելով այդ նախագիծը, ետ վերադարձրեց այն վերամշակելու համար։ 1910 թ. որոշ փոփոխություններից հետո փոխարքան իր նախագիծը կրկին ուղարկեց մայրաքաղաք։ Կառավարության քննարկումից և խմբագրական մի

---

[1] Ի դեպ, այդ քննադատությունը պետք է վերաբերել նաև պրոֆ. Մորոխովեցին, որը նույնպես կանգնած էր այն տեսակետին, թե Հայաստանում ու Ադրբեջանում գյուղացիական ռեֆորմի բովանդակությունը ավելի բուրժուական էր, քան Եվրոպական Ռուսաստանում (տե՛ս Е. А. Мороховец, Крестьянская реформа 1861 г., М., 1937)։

շարք փոփոխություններից հետո 1912 թ. դեկտեմբերի 20-ին ցարը հաստատեց այդ նախագիծը։

Վերլուծելով այդ օրենքը, հեղինակը նշում է, որ այն չէր տարածվում Զաքաթալայի օկրուգի, Դաղստանի կախյալ գյուղացիների, ինչպես և Թիֆլիսի նահանգի խիզանների վրա։ Ապա գրում է, որ կառավարությունը իբրև «օգնություն» Հայաստանի գյուղացիներին տալիս էր 8 միլիոն ռուբլի, իսկ հետո հավաքելու էր 15.900.000 ռուբլի, այսինքն մոտ կրկնակին, չհաշված պետական այն հարկը, որը վճարելու էին «ազատագրված» գյուղացիները իրենց բաժնեհողերի համար։ Այդ ամենի հետևանքով Հայաստանի շինականները շարունակեցին մնալ կախյալ վիճակում նաև 1912 թ. հետո։ Միայն ցարիզմի տապալումով նրանք կարողացան թոթափել մուլքադարական-կալվածատիրական լուծը և դառնալ իրենց հողերի տերը։

Գյուղացիական ռեֆորմի բովանդակության ու հետևանքների վերլուծումից հետո գիտնականը փորձում է որոշել նաև նրա տեղն ու դերը Հայաստանում կապիտալիզմի զարգացման գործում։ Այս նպատակով նա համեմատում է կալվածատիրական ու պետական գյուղացիների թիվը և սրանց օգտագործման տակ եղած հողերի տարածությունները և ցույց է տալիս, որ առաջինները կազմում էին երկրի ամբողջ գյուղական բնակչության 19 տոկոսը, իսկ նրանց հողերը՝ երկրի պիտանի հողերի սոսկ 7 տոկոսը։ Այստեղից իրավացիորեն եզրակացնում է, որ Հայաստանում «գյուղացիական ռեֆորմը չէր կարող միշտ թե շատ զգալի դեր խաղալ գյուղի տնտեսական զարգացման մեջ կապիտալիստական ուղղությամբ. մանավանդ երբ շմոռանանք իր տեղում նշված այն լական հանգամանքները և, որ Անդրկովկասի այդ երեք նահանգների (խոսքը Երևանի, Ելիզավետպոլի և Բաքվի նահանգների մասին է—Ա. Հ.) ռեֆորմի մեջ պահպանվեցին նորատիրական շատ գծեր և ամենից առաջ այդտեղ չիրագործվեց գյուղացիական հողարաժնի հետզհետմը, և ժամանակավոր կախյալ կիսանորտական դրությունը գյուղում գրեթե անխախտ մնաց ևս ամբողջ չորս տասնամյակ» (111—112, ընդգծումը մերն է—Ա. Հ.)

Քանի որ պրոֆ. Վ. Հ. Ռշտունին իր անցյալ աշխատություններում այս եզրակացությունը չէր ձևակերպել, պատմաբաններից ու տնտեսագետներից ոմանք ուղղակի կամ անուղղակի նրան են վերագրում այն միտքը, թե իբր Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների առաջացման ու զարգացման վճռական դերը պատկանում է գյուղացիական ռեֆորմին։ Այս հեղինակները, շփոթ մտցնելով գիտության մեջ, այնուհետև մարտնչում էին իրենց իսկ ստեղծած ֆանտազիայի դեմ։ Հեղինակը սույն ձևակերպումով որոշակիորեն հայտնում է իր տեսակետը ռեֆորմի դերի մասին կապիտալիզմի զարգացման գործում և վերջ դնում նման թյուրիմացություններին։

Պատմաբանը գտնում է, որ XIX դարի երկրորդ կեսին, հատկապես վերջին տասնամյակներում, կապիտալիստական հարաբերությունները այնուամենայնիվ թափանցում են գյուղ, արմատավորվում ու զարգանում։ Նա ցույց է տալիս, որ այդ պրոցեսի առաջատարտիկները հանդիսանում են ոչ թե տեղական հողատերերը (ընդհակառակը սրանք սեփական տնտեսությունը չվարելով նույնիսկ քայքայվում են), այլ գլխավորապես գյուղական հարուստներն ու մասամբ ռուսական արդյունաբերական ձեռնարկությունների ներկայացուցիչները կամ պաշտոնյաները։ Ընորոշ է, որ այդ հարուստները շատ հաճախ առևտրա-վաշխառուական գործունեությունը զուգակցում են իրենց ձեռնարկուական գործունեության հետ, որի հետևանքով նոր առաջացող բուրժուական հարաբերությունները միահյուսվում են միջնադարյան կապալային հարաբերություններին։ Արժեքավոր է հեղինակի նաև այն եզրակացությունը, որ կապիտալիստական հարաբերությունները հայկական գյուղում XIX դարի 90-ական թթ. ավելի էին զարգացած, քան նախորդ շրջանում։ Նա ցույց է տալիս, որ այդ հարաբերությունների առաջընթացին խոչընդոտում էին ոչ միայն ֆեոդալիզմի բազմաթիվ մնացուկները, այլև ցարիզմի գաղութային քաղաքականությունը։ Կովկասյան իշխանությունները հաճախ հայերին մերժում էին մեծահանդակ տարածությունների վարձակալումներ տալը, երկյուղ կրելով, որ նրանք կարող են իրենց ձեռքը վերցնել ծայրերկրի տնտեսական բարձունքները։

Վ. Ռշտունին իր աշխատության մեջ զգալի տեղ է հատկացնում նաև գյուղացիական շարժումներին և նշում է, որ շինականները ռեֆորմից թե՛ առաջ և թե՛ հետո պայքարում էին շահագործման գերազանցապես ֆեոդալական ձևերի դեմ ու չնայած արիություն ու տոկունություն էին ցուցաբերում, բայց և այնպես պարտվում էին, որովհետև նրանց ելույթները տառապում էին այն թերություններով ու բացերով, որոնք հատկանշական էին ամբողջ Ռուսաստանի գյուղացիական շարժումներին։ Հեղինակը թեև լուրջ գործ է կատարել Հայաստանի գյուղի աշխատավորների դասակարգային պայքարի պատմության ուսումնասիրության բնագավառում, բայց գտնում է, որ այդ ուղղությամբ դեռ քիչ բան է արված, և որ համառ ու տեսական պրպտումների միջոցով հնարավոր կլինի նկարագրել Հայաստանի «գյուղացիության

երկու հատվածի (այսինքն՝ կալվածատիրական ու պետական—Ա. Հ.) պայքարի պատմության գոհացուցիչ պատկերը» (247)։

Հեղինակն այնուհետև անդրադառնում է հայ հասարակական-քաղաքական հոսանքներին և ցույց է տալիս, որ նրանք հողային հարցի լուծման մոտենում են ըստ էության երկու տեսանկյունից՝ լիբերալիզմի և հեղափոխական դեմոկրատիզմի։ Դրանցից առաջինը կարող էր հանգեցնել կապիտալիզմի զարգացման պրուսական, իսկ մյուսը՝ ամերիկյան ուղիներին։ Ապա նշում է, որ անկախ այդ մտածողների ցանկություններից, հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ Հայաստանում, ինչպես և Ռուսաստանի մեծ մասում կապիտալիզմի զարգացումը դնաց պրուսական ուղիով։

Մենագրության մեջ գիտական լուրջ արժեք է ներկայացնում նաև այն բաժինը, որտեղ ամփոփվում են սովետական պատմաբանների ու տընտեսագետների կարծիքները Հայաստանում գյուղացիական ռեֆորմի և կապիտալիզմի զարգացման մասին։ Հեղինակը անհաջող է համարում պրոֆ. Հ. Ե. Թումանյանի այն ձևակերպումը, որից ստացվում է, թե Անդրկովկասի ռեֆորմը հանդիսանում էր արևելքի շուկաներում ցարիզմի վարած գաղութային քաղաքականության արդասիք։ Համամիտ չէ պրոֆ. Մ. Հ. Ադոնցի այն կարծիքին, որ իբր Ռուսաստանի ծայրամասերում, հատկապես Լեհաստանում ծավալված գյուղացիական շարժումները ստիպեցին ցարիզմին ռեֆորմ անցկացնել նաև Անդրկովկասում։ Մերժում է Մ. Եսայանի, Խ. Ավդալբեկյանի և Մ. Եգանյանի այն պնդումը, թե 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը չի կարելի ռեֆորմ համարել։ Համաձայն չէ Խ. Ավդալբեկյանի այն հայտարարության հետ, որ իբր Հայաստանում, մասնավորապես XIX դարի 40-ական թթ., գոյություն չեն ունեցել ճորտության տարրեր և այլն։

Այս առարկումները պետք է հիմնականում հիշտ համարել, քանի որ ռեֆորմի պատճառը Անդրկովկասում ոչ թե ցարիզմի արևելքում վարած քաղաքականությունն էր կամ կայսրության այլ ծայրամասերում ու Լեհաստանում ծավալված գյուղացիական շարժումները, այլ ցարիզմի վերցրած ընդհանուր բուրժուական վերափոխումների կուրսը, Անդրկովկասի տնտեսական վերելքն ու գյուղացիական պայքարի ուժը։ Որքան էլ որ 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը պահպաներ ֆեոդալական հողատիրությունը, շինականների շահագործման միջնադարյան ձևերը և արտատնտեսական հարկադրանքի տարբերակները, այնուամենայնիվ, դա ռեֆորմ էր, քանի որ իր մեջ պարունակում էր բուրժուական գծեր և փոքր ինչ պայմաններ էր ստեղծում կալվածատիրական գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար։

Պրոֆ. Վ. Հ. Ռշտունու աշխատությունը հանդիսանում է արժեքավոր ներդրում մեր պատմագիտական գրականության մեջ։ Այն գրված է փաստական հարուստ նյութի հիման վրա և հատկանշվում է գիտական խոր վերլուծումներով ու կարևոր ընդհանրացումներով։ Երկար ու ձիգ տարիներ ուսումնասիրելով Արևելյան Հայաստանի XIX դարի կալվածատիրական գյուղի ագրարային հարաբերությունները, դեռ 1940-ական թթ. նա բնութագրել էր դրանց հիմնական էությունը։ Նարագրելով «Ուրվագծերի» Ա և Բ մասերը, հեղինակն առիթ ունեցավ ամփոփել ագրարային հարաբերություններով զբաղվող մասնագետների վերջին երկու տասնամյակների ձեռք բերած նվաճումները, զատել հիշտ սխալից, վերացնել նաև սեփական թերությունները և ավելի ամրապնդել իր գիտական տեսակետները։ Այժմ կարելի է ասել, որ հեղինակի սույն մենագրությամբ համարյա սպառվում է Հայաստանի կալվածատիրական գյուղի XIX դարի հողային հարաբերությունների ուսումնասիրությունը։ Մասնագետներն այսուհետև պետք է ֆունդամենտալ աշխատություններ ստեղծեն նաև Հայաստանի գյուղացիության ամենաստվար մասի՝ պետական գյուղացիների, ինչպես և ավելի փոքր զանգվածի՝ վանքապատկան շինականների պատմության վերաբերյալ։

Պատմ. գիտ. դոկտոր Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Р. А. АБРАМЯН, Армянские источники XVIII в. об Индии, изд. АН Арм. ССР, Ереван, 1968, 295 стр., цена 1 р. 16 к.

Ռ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, XVIII դարի հայկական աղբյուրները Հնդկաստանի մասին, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1968, 295 էջ, գին 1 ռ. 16 կ.:

Հայ գաղթականների պատմության մեջ կարևոր դեր է կատարել Հնդկաստանը։ Այդ միջնադարում, նոր պատմության շեմին այդ երկրում հիմնված հայկական գաղթավայրերը մեր ժողովրդի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում խոշոր հետք են թողել։